ԵՐԿԱՄՍՅԱ ԴԱՍԸՆԹԱՑ ՓԱՐԻԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑՈՒՄ

21.06.2016 12:40

Հարգելի՛ փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի և Փարիզի փաստաբանների միության միջև առկա համագործակցության շրջանակներում այս տարի ևս **Հայաստանից 1 կամ 2 փաստաբան հնարավորություն կունենա մասնակցել Փարիզում անցկացվող երկամսյա դասընթացին**, որի ընտրական փուլը սկսված է:

Մրցույթին մասնակցելու համար կարող են դիմել ֆրանսերեն լեզվի գերազանց իմացությամբ այն փաստաբանները, ում տարիքը չի գերազանցում 40 տարեկանը և ում փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը դիմելու պահին կասեցված չէ:

Դասընթացն անց է կացվելու 2016 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Փարիզում բնակվելու և ճանապարհի **բոլոր ծախսերը պետք է հոգա անձամբ փաստաբանն իր հաշվին**: Հնարավոր է նաև որոշակի ֆինանսական աջակցության և/կամ կացարանի տրամադրումը:

Մրցույթի մասնակցության համար info@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին անհրաժեշտ է ուղարկել մասնակցության հայտ՝ մինչև 2016 թվականի հունիսի 23-ը ներառյալ: Հայտին պետք է կցել ինքնակենսագրական (CV):

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })